մայն պատկառիլ իրմէ ։ Գլխուն մազերը երկու բաժնուած ինչուան ականջները և անկէ ալ դէպ 'ի ուսերուն վրայ ձգուած են ։ Ճակտին մէջ տեղը ըստ սովորութեան նազովրեցւոց փունջ մը մազ ունի . Ճակատը թէպէտ շիտակ է , բայց զուարթ պարզութի̅ մը կը նկատես վրան . երեսը ամենևին կնճռած չէ . քիթը կանոնաւորեալ ձև մը ունի . նըմանապէս ռնգունքը և բերանն ալ համեմատ ։ Գթած և անոյշ նայուածք մը ունի . աչքերը արևու պէս փայլուն և լուսաւոր են , անանկ որ չկրնար մարդ երկայն ատեն երեսը նայիլ ։ Յանդիմանելու ատենը վախ մը կը ձգէ դիմացինին վրայ , իսկ խրատելու ժամանակ կարեկից և ցաւակից կ'ըլլայ . ամենուն ինքզինքը սիրցընել կու տայ . և պատշաճ ծանրութեամբն հանդերձ միշտ զուարթ է . կ'ըսեն թէ ամենևին խընդացած չէ , բայց պէտք եղած տեղը երբեմն արտասուած ։ Բազուկներն և ձեռքերը խիստ վայելուչ են ։

Ընտանեկան խօսակցութեանց մէջ սիրելի և հաճոյական կերպ մը ունի , և թէպէտ այնպիսի առթից մէջ քիչ անգամ երևնայ , բայց ան ալ վայելուչ կերպով ։ Շնորհալի և յատուկ դէմք մը ունի , և գծագրութիւնը բոլորովին նման է իր մօրը , որուն համար կ'ըսեն թէ անանկ գեղեցիկ օրիորդ այս կողմերս չէ տեսնուած ։ Եթէ մեծափառ տէրութիւնդ ուզենայ այս մարդը տեսնել , հրաման տուր ինծի , և մէկէն խաւրեմ քեզի ։ Իր հանճարովն և իմաստութեամբը բոլոր Երուսաղեմացիքը զարմացուցած է . առանց բան մը սորված ըլլալու ամէն գիտութի̅ և ուսմունք ունի . միշտ բոկոտն ու բաց գլխով կը քալէ . շատը վրան կը խնտան , բայց թէ որ մէյմը հետը խօսին՝ զամենքը կ'ապշեցընէ . ամենուն բերանն է թէ ասանկ մարդ մը դեռ չէ տեսնուած աս կողմերս . և ինչպէս որ շատ անգամ լսեր եմ Հրէաներէն՝ դեռ մէկը գտնուած չէ որ ասանկ սուրբ և ճշմարիտ սկըզբունքներ սորվեցընէ ։ Շատ գիտուն և իմաստուն Հրեայք՝ ա̅ծային մարդ մը կը սեպեն զինքը և կը հաւտան իրեն , և շատերն ալ ընդհակառակն դիմացս գէշ կը խօսին վրան ըսելով թէ տէրութեանդ դէմ բաներ կը զրուցէ ։ Այսպիսի նախանձոտ և չարասէր Հրէից վրայ շատ նեղացեր եմ։ Ասկէ զատ կ'ըսեն թէ դեռ մէկու մըն ալ տհաճութե̅ պատճառ չէ եղած , հապա զամենքը գոհ ըրած իր քաղցր վարմունքովը . ուստի որոնք որ զինքը կը ճանչնան կամ տեսնուած են հետը՝ իրենց հիւանդութիւններէն բժշկուելու համար , ամէնքն ալ կը վկայեն թէ ինչ բարիք տեսած են իրմէ ։ Սակայն այսու ամենայնիւ հնազանդ եմ տէրութեանդ , և ինչ որ կը հրամայես՝ պատրաստ եմ կատարելու ,, ։

ԼԵՆՏՈՒԼՈՍ ՊՈԲԼԻՈՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Մարդուս բնակած ամենէն բարձր քաղաքներն ու տեղուանքը :

Մարդուս կենդանեացմէ գլխաւոր զանազանող բան մ՚ ալ իր ամէն կլիմայի շուտով յարմարիլն է ։ Ցուրտ տաք , թաց ու չոր՝ մարդուս կազմուածքին վրայ տարբերութիւն ընեն ալ նէ , բայց մարդս ուզածին պէս կրնայ անոնց յարմարիլ ։ Աս բանս թէ և մարդուս բնական կազմուածքին կատարելութենէն առաջ կու գայ , բայց կայ նաև ուրիշ գլխաւոր պատճառ մ՚ ալ , որ է իր հնարագիւտ ճարտարութիւնը . անով ոչ միայն կրնայ ինքզինքը բնութեան յարձակմունքէն պահպանել , հապա երբեմն ինչուան նաև զբնութիւնը իրեն յարմարցընել ։ Այսպէս ահա կը տեսնենք որ երկրիս ամէն գօտիներուն տակ ալ մարդս կ'ապրի և կը սնանի . ուր կենդանիք չեն՝ կամ շատ դժուարաւ կրնան ։

Հոս ընթերցողաց հետաքրքրութեանը համար դնենք , Ովկիանոսին երեսէն առած մարդուս բնակած ամենէն բարձր քաղաքներն ու տեղուանքը .

Անքոմորքայի նամակատունը	ՄԵՏՐ	4 792
Արոյի նամակատունը		4 376
Դաղօրա (գիւղ Հնդկաց)		4 344
Բոդոսի (Պոլիվիա)		4 307
Գալամորգա քաղաքը		4 141
Անդիանայ մետաղները		4 101
Բունոյ քաղաքը (Բերու)		3 911
Օրուրոյ քաղաքը (Պոլիվիա)		3 792
Լա Բազ քաղաքը (Պոլիվիա)		3 717
Միգուէլպամպա քաղաքը (Բերու)		3 618
Դուբիզա քաղաքը (Պոլիվիա)		3 049
Գուիդօ		2 908
Գախամարա քաղաքը (Բերու)		2 860
Լա Բլադա (Պոլիվիոյ մայրաքաղաք)		2 049
Սանդա-Ֆէ տէ Պոկոդա (Հարաւ. Ամեր.)		2 661
Գուէնսա (ի Գուիդոյ)		2 633
Գօչագամպա քաղաք (Պոլիվիա)		2 575
Արէգուիբա քաղաք (Բերու)		2 377
Մեխիքօ		2 277
Սէն Կօդարտի հիւրանոցը		2 075
Սէն Վէրան գեղը (Ծովային Ալբեանք)		2 040
Պրեօյլ գեղը (Սերվէն լերան ոտքը)		2 007
Մօրէն գեղը (Սաորին Ալպեայք)		1 902
Սէն Ռըմի գեղը (Գաղղիա)		1 604
Հէաս գեղը (Պիրէնեանք)		1 465
Կավարնի գեղը (Պիրենեանք)		1 444
Պրիանսոն		1 306
Պարէժ գեղը (Պիրէնեանք)		1 269
Սն Իլտէփոնս պալատը (Սպանիա)		1 155
Մօն տօրի բաղանիքները (Օվէրնեը)		1 040
Բօնդալիէ		828
Մադրիտ		608
Ինսբրուք		566
Մունիխ		538
Լօզան		507
Աւկսպուրկ		475
Սալցպուրկ		452
Նէօշադէլ		438
Բլոնպիէր		421
Գլէրմօն-Ֆէրրան		411
Ժընեւ կամ Ճինեվրա		372
Ֆրայպէրկ		372
Ուլմ		367
Ռադիզպօն		362
Մոսքուա		360
Կոթա		285
Դուրին		230
Տիժօն		217
Բրակա		179
Մադօն		168
Լիօն		162
Գասսէլ		158
Լիմա		156
Կոդդինկ		134
Վիեննա		133
Դուլուզ		132
Միլան (բուսաբանական պարտէզը)		128
Գոլոնիա		121
Բարմա		93
Տրէզտա		90
Բարիզ (Դիտարանին Ա գատիկոնը)		65
Հռոմ (Կապիտոլիոն)		46
Պեռլին		40

ԲՆԱԿԱՆՔ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Քարերու մէջ փակուած ողջ կենդանիք:

Գիտութիւնք, անխոնջ խուզարկուք բնական հրաշալեաց, այնպէս սովորեցուցեր են զմարդիկ զարմանալու, որ ինչ նոր լուր տան, ամենայն անձկանօք և կատարեալ հաւատքով ընդունելի կ'ըլլան։ Ուստի լրագիրք, թէ՛ քաղաքական և թէ բանասիրական, լուրերնին հատնելու որ ըլլայ, սովոր են առ այն անըսպառելի աղբիւրը դիմելու. և թէպէտ երբեմն անգէտ տեղեաց և անփորձ նիւթոյն, առած ջրերնին կը պղտորեն, 'ի վերայ այսր ամենայնի ծարաւի ընթերցողք, սկզբնաղբեր յստակութենէն խաբուած՝ որ յստակութիւնը բոլորովին կորսուած չկրնար ըլլալ, ուրախութեամբ կ'ըմպեն, մանաւանդ թէ անոր ախորժական համն ալ կը գովեն։ Այս բանս, որ հիմակուան ժամանակս յաճախ է, այս տարի մարտ ամսուն մէջ նոր կերպով մը կրկնուեցաւ, և աւելի այն օրերը՝ երբ արևելեան պատերազմին որոտաձայն թնդմունքները դադարեր էին, և Պարիզու լուին խորհրդակցութիւնները ժխտելով լրագրաց սովորական ճարակը, անոնց գրիչներն անգործութեան մէջ ձգեր էին։ Այնոյն ժամանակուան ելած լրոց մէջ, մէկ հատը քան զամէնն աւելի բախտաւոր գտնուեցաւ, և է լուրն այս։ Խումբ մը աշխատաւորաց երկաթուղւոյ ճամբայ բանալու համար քարաժայռեր կտրելու ատեննին՝ քարաժայռի մը նոր բացուած ծակի մը մէջէն յանկարծ դուրս ցատքեր է հրէշ կենդանի մը, որուն տեսակը անյիշատակ ժամանակէ 'ի վեր կորսուած է, և խղդուկ ձայն մը հանելով ու տկար կերպով թևերը շարժելով՝ մէկէն հոնտեղի աշխատաւորաց աչքին առջև ինկեր մեռեր է։

Այս կարգէ դուրս պատմութիւնս